ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները

ԱՌԱՐԿԱ - Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ - Հեղինե Առաքելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ – Վերիշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Շալունց

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն---------- 3

2.«Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները---------- 5

3. Աշակերտների կողմից պատճառահետևանքային կապերի և օրինաչափությունների ճանաչման գործընթացը---------- 8

4.Թեմայի դասավանդման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցում----------12

5. Դասի պլանի նմուշ-օրինակ----------14

6.Եզրակացություն----------17

7.Օգտագործված գրականության ցանկ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը: Նոր տիպի մարդու ձևավորումը կրթության խնդիրն է: Հետևաբար, կրթության նորովի կազմակերպման հարցը դառնում է առաջնահերթ աշխարհի բոլոր երկրներում:

Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացումը 20-րդ դարի կեսերին սկզբնավորեց, այսպես կոչված հետարդյունաբերական հասարակության ձևավորումը, որն իր էությամբ տեղեկատվական հասարակություն է:

«Պատմություն» առարկայի ուսումնասիրությունը նպաստում է սովորողների մեջ աշխարհի մասին ամբողջական պատկերացումների ձևավորմանն ու համամարդկային հիմնախնդիրների գիտակցական ընկալմանը, հարափոփոխ աշխարհում հասա-րակական բարդ հարաբերություններում ու տեղաշարժերում ակտիվ գործունեությանն ու ճիշտ կողմնորոշմանը:

Այս առումով «Պատմություն» առարկայի դասավանդման համար կարևոր նշանակություն կունենա «Առաջին համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման առանձնահատկությունների բացահայտումը:

Ինչպես գիտենք 20-րդ դարը լի էր մի շարք իրադարձություններով, որը իր հետքը թողեց մարդկության և ընդհանրապես աշխարհի զարգացման հետագա ընթացքի վրա: Դրանցից էր Առաջին աշխարհամարտը, որը սկսվել էր 1914 թվականի օգոստոսի 1-ին և շարունակվել մինչև 1918 թվականի նոյեմբերի 11-ը:

Պատերազմին, որը ժամանակին բնութագրվել է որպես պատերազմ բոլոր պատերազմներին վերջ տալու համար, մասնակցել է ավելիքան 70 միլիոն զինվորական, որոնցից 60 միլիոնը՝միայն Եվրոպայում, ինչի արդյունքում այն դարձել է խոշորագույն պատերազմներից մեկը պատմության մեջ:Զոհերի մեծ թվի պատճառ են եղել նաև տեղի ունեցած 1914-1916թթ հայոց ցեղասպանությունը ու 1918 թվականին բռնկված գրիպի համաճարակը. արդյունքում ամբողջ աշխարհում մահացել է 50-100 մլն մարդ:Այն եղել է մարդկության պատմության ամենաարյունահեղ պատերազմներից մեկը, որը հանգեցրել է քաղաքական խոշոր փոփոխությունների:

Պատերազմի արդյունքում չլուծված հակամարտությունները նպաստել են շուրջ երկու տասնամյակ անց Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելուն:

Այսօր էլ աշխարհը պաշտպանված չէ Երրորդ համաշխարհային պատերազմի վտանգից: Եվ հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հենց այս հանգամանքով: Այս առումով կարևոր ենք համարում հիմնական և ավագ դպրոցում դասընթացի ուսուցումը կազմակերպել այնպես, որ սովորողները հասկանան թե ինչ աղետալի հետևանքներ կարող է ունենալ նման արյունոտ և խոշորամասշտաբ պատերազմները մարդկության պատմության մեջ:

Նպատակը: Աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները թե՛ հիմնական, և թե՛ ավագ դպրոցում, վերանայելու թեմայի դասավանդման մեթոդաբանությունը, թեմայի մատուցման հայեցակարգային մոտեցումները՝ նպաստելով աշակերտների կողմից թեմայի ավելի խորը յուրացմանը:

Խնդիրները.

- ուսումնասիրել «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները,
- ներկայացնել աշակերտների կողմից պատճառահետևանքային կապերի և օրինաչափությունների ճանաչման գործընթացը,
- վերլուծել «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի բարդ, դժվարություններ ներկայացնող հարցերը, դրանց յուրացման առանձնահատկությունները, դասի արդյունավետության բարձրացման ուղիները,
- բացահայտել թեմայի դասավանդման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցում,
- մշակել օրինակելի դասի նմուշ-օրինակ:

«ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ և ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասի նպատակներից է կախված ինչպես ուսումնական գործընթացի յուրաքանչյուր էլեմենտի բովանդակությունը, այնպես էլ դասի կառուցվածքը, դասի տիպը, ընտրված ուսումնական գործունեության ձևերն ու մեթոդները:

Հաշվի առնելով հայոց և համաշխարհային պատմություն առարկաների հիմնական և ավագ դպրոցի չափորոշիչները և ծրագրերը առանձնացվել են հետևյալ կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակները.

- սովորողներին հաղորդել ամբողջական և համակարգված գիտելիքներ Առաջին աշխարհամարտի, որպես համամարդկային հիմնախնդիրներից մեկի (պատճառներ, առիթ, սկիզբ, ընթացք, ավարտ, արդյունք) մասին,
- աճող սերնդին ոչ միայն հաղորդել նման խոշոր պատերազմի մասին տեղեկություններ, այլ նաև ձևավորել ազգային և համամարդկային նման աղետալի հիմնախնդիրների լուծման համար պայքարելու վճռականություն,
- Սովորողներին զինել նոր և նորագույն ժամանակների համաշխարհային և հայոց պատմության գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրպանդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը, քանի որ Առաջին աշխարհամարտում իրենց անգնահատելի դերն են խաղացել նաև հայերը,որի վառ ապացույցն է 1918թ. մայիսի 28-ը: Այս բոլոր գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ և իմաստավորել մարդկության պատմության անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Համաշխարհային և հայոց պատմության խոր և համակողմանի իմացությունը կօգնի մեր հանրապետության ապագա քաղաքցիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:
- Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Տալ նրանց համակողմանի բնութագիրը և մարդկային նկարագիրը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

- Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից, կարծիքների ու տեսակետների, մտքերի ու գաղափարների բախումից:
- Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:
- Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային նման գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ: Մարդկության առջև ծառացած հիմնահարցերի լուծման գործում իրեց ավանդն ունենալու ձգտում և ցանկություն ունենալ:
- Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:
- Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:
- Զարգացնել ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու, անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ և հմտություններ:
- Զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները, ինչպես նաև մտավոր գործողությունները:
- Եվ վերջապես ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողությունները:

Նպատակին հնարավոր է հասնել բազմաթիվ խնդիրների իականացնելու ճանապարհով: Յուրաքանչյուր խնդիր առաջադրվում է ընդհանուր նպատակին հասնելու հաշվարկով:

Թեմայի ուսուցման կարևորագույն խնդիրներն են՝

- Նպաստել համամարդկային հիմնախնդիրների հիմնավոր յուրացմանը,

- Խորացնել Համաշխարհային պատերազմի վերաբերյալ սովորողների պատկերացումներն ու գիտելիքները,
- Թե՛ հիմնական և թե՛ ավագ դպրոցում խորացնել Համաշխարհային պատերազմների վերաբերյալ ընդհանրական պատկերացումները ու գիտելիքները, և ձևավորել պայքարի միասնական մոտեցում նման խոշոր և մարդկությանը զպառնացող աղետների դեմ,
- օգնել գոյություն ունեցող բացասական կարծրատիպերի հաղթահարմանը,
- Դաստիարակել ավելի բանիմաց, լայնախոհ, պետության հանդեպ պատասխանատու քաղաքացիներ,
- ձևավորել պատմական արդարության վերականգնման, յուրաքանչյուր ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարելու գիտակցություն:

Դասի անցկացման արդյունավետությունը կախված է ուսուցչի կողմից հանձնարարությունների արդյունքների կանխատեսման հմտություններից, դասի ժամանակ նրա իրականացմանը հասնելու ձգտումից, սովորողների հետ հակադարձ կապից (դասավանդման և ուսուցման միասնությունից):

Թեմայի ուսուցման ավարտին աշակերտը պետք է.

- **իմանա** միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների, դրանց պատճառների ու գլխավոր արդյունքների, Առաջին աշխարհամարտի սկսման պատճառների ,ներգրավված երկրների, առավել խոշոր ճակատամարտերի մասին:
- **կարողանա** համեմատել միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների պատճառներն ու գլխավոր արդյունքները, ընթացքն ու հետևանքները,
- **Կարողանա** վերլուծել և ներկայացնել Առաջին աշխարհամարտի պատճառները:
- գնահատի խաղաղության դերը՝որպես մարդկության հետագա գոյության նախապայման:
- արժևորի հայերի մասնակցությունը Առաջին աշխարհամարտին,
- կարողանա դիտարկել Հայաստանում նույն ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները համաշխարհային պատմության համատեքստում,

• ունենա պատմական մտածողություն, վերլուծություններ անելու, ինքնուրույն և խմբով աշխատելու, համեմատելու, երևույթները գնահատելու կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, կամային որակների զարգացմանը:[1]

Այսպիսով, արժևորելով ՀՀ հանրակրթական դպրոցներում պատմության ուսումնասիրությունը, նման հիմնախնդիրների հետ սովորողների ծանոթացումը, պետք է ամրագրել, որ պատմական ժառանգությունը, փորձն ու դասերը հսկայական արժեք են ներկայացնում: Դրանք ծառայում են սովորողների բարոյական և մշակութային զարգացմանը, հասարակության մեջ իրենց տեղը գտնելուն, իրենց պատմական արմատները ճանաչելուն և պատմական հիշողությունը ձևավորելուն:

Այս խնդիրները հնարավոր է իրականացնել միայն դասի, թեմայի, բաժնի և դասընթացի համար նպատակների, վերջնարդյունքների ճիշտ սահմանման միջոցով:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ և ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Պատմական գիտելիքի և ընկալման կարևոր մաս է բացատրությունն առ այն, թե ինչու են պատմական տվյալ իրադարձությունները տեղի ունեցել: Մի բան է ծանոթ լինել պատմական շարադրանքին, բոլորովին այլ բան է տվյալ շարադրանքի իրական ընկալումը, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ սովորողները կարողանում են վերլուծել անցյալի շարադրանքը և բացատրել, թե ինչու են տվյալ իրադարձությունները զարգացել հենց այդ նույն ձևով ինչպես որ այն կա:

Շատ հաճախ այս կամ այն երևույթների պատճառները սովորողները տեսնում են միայն այս կամ այն խոշոր պատմական անհատականության գործունեության մեջ:Դրա համար պատմության դասավանդման հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում դպրոցականներին սովորեցնել պատմական ցանկացած երևութի պատճառը տեսնելու նյութական արտադրության, հասարակական տարբեր խավերի, ժողովրդական լայն զանգվածների գործունեության և այլ սոցիալ–տնտեսական ու քաղաքական շահերի մեջ:

[1]Տե՛ս «Համաշխարհայինպատմություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2009, «Համաշխարհային պատմություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր (VI-IX դասարաններ), Երևան, 2012:

Այստեղ շատ կարևոր է, որ սովորողները կարողանան տարբերել իրադարձությունների, երևույթների, գործընթացների պատճառներն առիթից, քանի որ դրանք միմյանցից տարբեր հասկացություններ են։ Օրինակ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները միջիմպերիալիստական հակասություններն էին, իսկ առիթը հանդիսացավ Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանտի և նրա կնոջ սպանությունը Սարաևոյում սերբ ազգայնական «Երիտասարդ Բոսնիա» կազմակերպության անդամ Գավրիլ Պրինցիպի կողմից 1914թ. հունիսի 28-ին։

Սովորողների կողմից պատմական երևույթների և գործընթացների, պատճառահետևանքային կապերի, օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները համարվում են յուրացված այն ժամանակ, երբ նրանք ոչ միայն կարողանում են վերարտադրել, այլև դրանք ընկալում են նոր պայմաններում։

Պատմական օրինաչափությունների ընկալումը սովորողների կողմից շատ կարևոր, բայց բարդ գործընթաց է, քանի որ նրանք պետք է գիտակցեն, որ արտադրության միջոցները հանդիսանում են հասարակության զարգացման հիմնական շարժիչ ուժը։

Սովորողների գիտակցության մեջ արտադրողական միջոցների որոշիչ դերի ձևավորումը անհնարին է առանց պատճառահետևանքային կապերի շղթայի ընկալման ու յուրացման։Այս շղթայի ամեն մի օղակ հանդիսանում է նախորդի հետևանքը և հաջորդի պատճառը։Դպրոցականների կողմից պատճառահետևանքային կապերի գիտակցված ընկալման համար անհրաժեշտ է հետևյալը.

1) նրանց մոտ ստեղծել վառ պատկերացումներ այդ շղթայի յուրաքանչյուր օղակի վերաբերյալ,

2) ապահովել այդ օղակների միջև եղած պատճառահետևանքային կապը,

3) միասնական պատճառահետևանքային կապերը ընդհանրացված վերլուծել։[2]

Պատմական նյութին, պատմական գիտելիքին տեղյակ լինելու համար, որպեսզի սովորողները կարողանան բացատրել դրանց օրինաչափությունները և պատճառահետևանքային կապերը պետք է՝

[2]Տե՛ս Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 117-121։

• Տեղյակ լինեն, որ Առաջին Համաշխարհային պատերազմ թեմայի դասավանդման ժամանակ ուսուցիչները պատճառահետևանքային փաստարկներ են կազմում, թե ինչու և ինչպես է տեղի ունեցել անցյալում տվյալ իրադարձությունը:

• Տեղյակ լինեն, որ բերված փաստարկները ենթակա են քննարկման, քանի որ այդ պատճառահետևանքային փաստերը կախված են ընկալման տարբեր մոդուլներից:

• Սովորողները նույնպես իրենց հերթին պետք է կարողանան կազմել պատճառահետևանքային փաստարկներ՝ վերլուծական տարբերակումներով և աստիճանակարգմամբ, նաև պետք է կարողանան վերլուծել և գնահատել ոչ միայն իրենց ուսուցիչների, այլ նաև այլոց կազմած տարբեր փաստարկներ թեմայի շուրջ:

Ուսուցիչները պետք է օգնեն սովորողներին խորացնել այսօրինակ ընկալումները մի շարք գործոններով: Եվ այդ ընկալումների զարգացումը ենթադրում է մի շարք հմտություններ, այդ թվում բարդ բառապաշարների և ընդհանրապես լեզվի հմուտ կիրառում, ինչպես նաև վերլուծական դասակարգումների և հասկացութային պիտակների ընկալում (բովանդակություն, ժամանակ, դերակատարություն և այլն): Շատ կարևոր է նաև անցյալի ժամանակագրության և իրադարձությունների տիպերի, գործընթացների ու իրավիճակների վերաբերյալ խոր գիտելիք ունենալ:

Ընդհանրապես, լեզվական գրագիտություն և կարողունակություն, սովորել սովորելու, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն զարգացնելը շատ արդյունավետ միջոց է սովորողների՝ աշխարհի մասին ունեցած գիտելիքները համեմատելու և զուգահեռներ անցկացնելու համար: Այլ կերպ ասած՝ որպեսզի սովորողը կարողանա տիրապետել անհրաժեշտ բառապաշարի, հասկացությունների կիրառմանը, դասակարգումների, ավելի հեշտ է այդ ամենը նրան բացատրել արդեն իսկ ծանոթ կամ հեշտ ընկալվող թեմաների շրջանակում:[3]

Իսկ ահա սովորողների պատճառահետևանքային տրամաբանությունը զարգացնող ռազմավարությունները հետևյալն են՝

[3]Տե՛ս Գիրք պատմության ուսուցման, ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Եր., 2020, էջ 20-22:

 Սովորողներին հանձնարարել, որ անձամբ իրենք ստեղծեն աշխարհամարտի մասին այնպիսի իրադարձությունների մոդելներ և դիագրամներ, որոնք ցույց կտան պատերազմի պատճառահետևանքային շղթաները, դրանց կապերը և արդյունքները:

 Պետք սովորողներին տալ օրինակ Առաջին Համաշխարհային պատերազմի պատճառների ցուցակ կամ տվյալ պատճառները ներկայացնող քարտեր և խնդրել բացատրել դրանք՝ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին վերցրված:

 Սովորողներին տալ մեր դեպքում պատերազմի հետ կապված իրադարձության շարադրանք, որի որևէ դրվագ նրանք պետք է բացատրեն շարադրանքի տարբեր տարրերը իրարից առանձնացնելու և վերակազմելու միջոցով:

 Սովորողներին հանձնարարել որպեսզի նրանք ստանձնեն օրինակ 1914-1918թթ. ընթացքում Նիկոլայ II-ի դերը, ստեղծել որոշումների կայացման պահերի վերարտադրման համատեքստ և որոշումներ կայացնել ու կանխատեսումներ անել դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:

 Սովորողներին հանձնարարել այլընտրանքային պատմության վերլուծություն, (օրինակ ի՞նչ կլիներ, եթե չսկսվեր I համաշխարհային պատերազմը), որպեսզի քննեն և ամրապնդեն իրադարձությունների տարբեր բաղադրիչների միջև եղած կապերի վերաբերյալ սեփական ընկալումը (ի՞նչ կլիներ, եթե Թուրքիան չմիանար Գերմանիային, ի՞նչ կլիներ, եթե Անտանտը հաղթանակ չտաներ): Այս ամենը հնարավորություն է տալիս սովորողին զարգացնել պատճառահետևանքային մտածողությունը և միջոց են պատմական նյութի ընկալումն ավելի խորացնել:

Պատճառահետևանքային կապերի բացահայտումը շատ ավելի արդյունավետ է,եթե այն տրվում է սխեմայի ձևով:

VIII դասարանում թեման դասավանդման ժամանակ կարող է օգտագործել «Ձկան կմախքը» մեթոդական հնարը:



Ավագ դպրոցում ուսուցիչը պատճառահետևանքային կապերի բացահայտման նպատակով կարող է օգտագործել սկզբնաղբյուրների, փաստաթղթերի հետ աշխատանքը: Ուսումնասիրելով ժամանակաշրջանի մի քանի սկզբնաղբյուրներ և փաստաթղթեր աշակերտները պետք է հիմնավոր փաստարկներով ներկայացնեն պատերազմի սկսման պատճառները: Ուսուցիչը կարող է նախնական հարցեր ձևակերպել նաշակերտներին առաջարկել այդ հարցերի պատասխանները գտնել սկզբնաղբյուրում: Աշխատանքի ավարտին ուսուցիչը կարող է սովորողների հետ միասին լրացնել «Պատճառահետևանքային շղթա» սխեման:



Այսպիսով, կարևորելով պատճառահետևանքային կապերի բացահայտումը պատմության դասերին պետք է ասենք, որ պատմության ուսուցման ընթացքում այն սովորողներն են հասնում լուրջ հաջողությունների, ովքեր տիրապետում են պատճառահետևանքային կապերին, պատմական զարգացման օրինաչափություններին, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև տեղի ունեցող օրինաչափ երևույթներին ու գործընթացներին և հասարակության զարգացման բնականոն օրենքներին:

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Համաշխարհային պատերազմը, որի դասավանդումը թե՛ հիմնական և թե՛ ավագ դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Ինչպես գիտենք դասարանից դասարան

փոխադրվելով աշակերտներին ներկայացվող պահանջները ավելի են բարդանում: Եվ արդեն պարզ է դառնում, որ ավագ դպրոցում սովորողներին
ներկայացվող պահանջները համեմատած ավելի բարդ են քան հիմնական դպրոցում: Դրա պատճառներից է սովորողների տարիքային առանձնահատկությունները, ճանաչողական հնարավորությունները և նախապատրաստվածության աստիճանը: «Առաջին Համաշխարհայիին պատերազմ» թեմայի դասավանդումը չափազանց կարևոր է դպրոցում: Թեմայի դասավանդումը տարբերվում է հիմնական և ավագ դպրոցում: Տարբերությունը սովորողների պատմական մտածողությունն է, որը Ավագ դպրոցի աշակերտների մոտ ավելի զարգացած է: Հիմնական դպրոցում թեման իր մեջ ներառում է հետևյալ թեմաները՝

Առաջին Աշխարհամարտի սկիզբը և ընթացքը (1914-1916թվականներ): Պատերազմի պատճառները, մասնակիցների նպատակները: Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Պատերազմի գլխավոր ճակատները: Ռազմական գործողությունները 1914-1916 թվականներին: Առաջին Աշխարհամարտի ավարտը և հետևանքները: Նոր ռազմաքաղաքական իրավիճակ 1917թվականին: Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությունը: Առաջին աշխարհամարտի գլխավոր հետևանքները[4]:

Ավագ դպրոցում «Առաջին համաշխարհային պատերազմ» թեման իր մեջ ներառում է հետևյալ թեմաները՝ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառները և սկիզբը: Առաջին աշխարհամարտի մասնակիցների նպատակները: Պատերազմի սկիզբը և ռազմաքաղաքական գործողությունները 1914-1916թթ.: Պատերազմի գլխավոր ռազմաբեմերը, ռազմական գործողությունների ընթացքը: Աշխարհամարտի Կովկասյան ճակատը: Հայոց Մեծ եղեռնը: Ռուսաստանի քաղաքակրթական նոր ընտրությունը. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները (1917 թ.): Քառյակ միության պարտությունը: Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Առաջին համաշխարհայի նպատերազմի ավարտը: Պատերազմի հետևանքները[5]:

---

[4]Տե՛ս «Համաշխարհային պատմություն» առարկայի հիմնական դպրոցի չափորոշիչ (VI-IX դասարաններ), էջ 10

[5]Տե՛ս«Համաշխարհային պատմություն», Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտակամաթեմատիկական հասքերի ծրագիր, (10-12-րդ դասարաններ):

Թեման դասավանդելու ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել պատմական փաստաթղթերը և քարտեզները: Ավագ դպրոցում փաստաթղթերի հետ աշխատանքը դժվարանում է, սովորողներին տրվում են ավելի բարդ առաջադրանքներ.

1) փաստաթղթի բովանդակությունից ընտրել գլխավորը, երկրորդականը և հիմնավորել դրանք, 2) մտածել ինչպիսի պատմական պայմաններ նպաստեցին տվյալ իրադարձության, երևույթի, գաղափարի, բարենորոգման ի հայտ գալուն, 3) համեմատել պայմանները, վավերագրական փաստաթղթից ընտրել տվյալները, 4) տալ պետական և քաղաքական գործիչների բնութագիրը և սկզբնաղբյուրի վերաբերյալ նախապատրաստել հաղորդագրություն, 5) մտածել ուսումնասիրված փաստաթուղթը ինչպես կարող է օգնել հասկանալու ժամանակակից հասարակական երևույթները:[6]

Թեմայի դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից օգտագործվող մեթոդները նույնպես տարբեր են հիմնական և ավագ դպրոցում: Մեթոդի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել դասի թեման, դասարանի տարիքային և այլ առաձնահատկություններ, տվյալ մեթոդի նպատակահարմարությունը տվյալ դասի համար: Ուսուցման մեթոդները պետք է համապատասխանեն՝

1. Դասի խնդիրներին,
2. Ուսումնական նյութի բովանդակությանն ու բնույթին,
3. Սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների մակարդակին,
4. Դասի նյութական ապահովվածությանը,
5. Ուսուցչի անձնական որակներին, պատրաստվածությանն ու մեթոդական վարպետության մակարդակին,
6. Սովորողների անհատական առաձնահատկություններին, կարողություններին, հնարավարություններին,
7. Դասի համար հատկացված ժամանակին:

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

Թեման ուսուցանելուց առաջ նախ պետք է վերհիշել աշխարհում ստեղծված դժվար քաղաքական իրադրությունը: Այս թեման անմիջական առումով կապ ունի հայ

[6]Տե՛ս Տե՛ս Պապոյան Հ. Գ., նշվ.աշխ, էջ 176-179

ժողովոդի ամենաարյունալի էջերից մեկի՝ Հայոց Ցեղասպանության հետ: Քանի որ, Առաջին Աշխարհամարտի տարիներին հայ ազգը զոհ դարձավ Օսմանյան հակահայ քաղաքականությանը: Առաջին աշխարհամարտի տարիներին կազմալուծվել, քայքայվել էր տնտեսությունը, երկիրը լցվել էր ցեղասպանությունից մազապուրծ եղած հազարավոր գաղթականներով, շարունակվում էին ճնշումները Ռուսաստանի և Թուրքիայի կողմից: Առաջին աշխարհամարտը աշխարհում ստեղծեց քաոսային իրավիճակ, քանի որ մարդկային, մշակութային և նյութական զգալի վնասներ են հասցվել մասնակից երկրներին: Պետք հասկանալ նաև պատերազմի վերջնարդյունքները, երբ քայքայվեցին 4 կայսրություններ և աշխարհում ստեղծվեց քաղաքական և աշխարհագրական նոր իրավիճակ:

Համոզվելով, որ աշակերտները ներկայացվածը ընկալել են ամբողջությամբ, ուսուցիչը շարունակում է՝ նշելով, որ Առաջին Աշխարհամարտը պատճառ հանդիսացավ շատ երկրների տարածքային կորստի, քարտեզի փոփոխության, Մուդրոսի զինադադարի կնքման, Բրեստ-Լիտովսկի այլ համաձայնագրերի ստորագրմանը:

Դասարան- 8

Առարկա- Հայոց պատմություն

Դասի թեման- Հայ ժողովուրդն առաջին աշխարհամարտի տարիներին

Դասի նպատակը-սովորողները կուսումնասիրեն և կձևավորեն վերլուծական ու քննական մտածողություն կվերլուծեն պատմական այն գործնթացները,որոնք տեղի ունեցան XX սկզբին և հանգեցրին աշխարհի վերաձևմանն ու վերափոխմանը.

Վերջնարդյունքները-Կհետազոտի XIX-XX դարերի առանցքային ,պատմական, հասարակական-քաղաքական գործնթացները, որոնք հանգեցրին աշխարհի վերափոխմանն և վերաձևավ

Խնդիրները- Դաստիարակել հայրենասիրական ոգի, արժևորել հայերի մասնակցությունը Առաջին աշխարհամարտին

Զարգացնել աշակետների տրամաբանական մտածողություն, ընդլայնել աշխարհայացքը

Դիտարկել Հայաստանում նույն ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները համաշխարհային պատմության համատեքստում

Կապը ՀՊՉ-ի հետ-ի 9,11

Խաչվող հասկացություններ – օրինաչափություն, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:

Հիմնական հասկացություններ – Միջազգային հարաբերություններ, Անտանտ, Եռյակ դաշինք, Քառյակ դաշինք, Հայոց Մեծ Եղեռն, Բրեստ-Լիտովսկ, Մուդրոսի զինադադար

Միջառարկայական կապեր- Հայոց պատմություն, աշխարհագրություն,ՆԶՊ

Մեթոդներ, հնարներ- Համառոտ դասախոսություն, Ձկան կմախք, Տ-աձև,Մտագրոհ

Ուսուցման միջոցներ- Համակարգիչ, պրոյեկտոր, տեսապատկեր, գրատախտակ, կավիճ, դասագիրք, թուղթ,

Դասի ընթացքը

Դասը սկսվում է Առաջին աշխարհամարտի մասին ուսուցչի ներածական զրույցով, որի ընթացքում աշակերտները ուշադիր լսելով ուսուցչին փորձում են մտաբերել և վերլուծել կարևոր մտքերը: Անցկացվում է մտքերի համադասարանական գեներացիա՝ մտագրոհ, Առաջին աշխարհամարտի շուրջ:

Այնուհետև սկսվում է մտքերի տեղատարափ: Սլաքների մոտ գրառվում են թեմային վերաբերվող աշակերտների կողմից արտաբերված բոլոր բառերն ու արտահայտությունները, կատարվում է գրառված բառերի, արտահայտությունների խմբավորում և մտքերի փոխանակում, որից հետո դասարանը բաժանվում է 3-4 խմբի, ստանում համապատասխան հանձնարարականները՝

1. Առանձնացնել պատերազմող կողմերի ռազմաքաղաքական նպատակները

2.Ներկայացնել առաջին աշխարհամարտի սկիզբն ու պատճառները

3.Ռազմական նշանավոր իրադարձությունները և դեպքերը

4. Հայ ժողովրդի մասնակցությունը և կամավորական ջոկատները

Խմբային քննարկումից և հետազոտությունները ներկայացնելուց հետո լրացնել Ձկան կմախքը, որը նախօրոք գծված է գրատախտակին, լրացնել, քննարկել, կատարել եզրահանգումներ:

Գնահատում Փոխադարձ գնահատում

Տնային աշխատանք Հավաքել տեղեկություններ հայկական կամավորական ջոկատների մասին, պատրաստել սահիկ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմական երևույթների մեծ մասը, եթե ոչ բոլոր պատմական երևույթները, կարող են մեկնաբանվել և վերակառուցվել տարբեր տեսանկյուններից, ինչը պայմանավորված է տեղեկատվության սահմանափակ լինելով, պատմությունը մեկնաբանողների և վերականգնողների սուբյեկտիվ շահերով և մշակութային փոփոխություններով, որոնք զգալի չափովորոշում են, թե յուրաքանչյուր նոր սերունդ անցյալի ո՞ր պահերն է կարևորում: Համաշխարհային և հայոց պատմություն առարկայի կարևոր թեմաներից մեկը Առաջին Համաշխարհային պատերազմն է:

Թեմայի ուսուցման նպատակներից է եղել, որ սովորողները հասկանան թե ինչ աղետալի վտանգի առջև է կանգնած եղել մարդկությունը 20-րդ դարի սկզբում: Այդ ամենը ընկալելուց հետո նրանք պետք է պատճառահետևանքային կապ ստեղծեն աշխարհի 1914-1918 թվականների իրադաձուությունների և այսօրվա իրադրության հետ և հասկանան արդյո՞ք այսօր մեզ նույնպես սպասվում է այդ աղետալի վտանգը:

Ներկայացված աշխատանքում անդրադառնալով Առաջին Համաշխարհային պատմության դասավանդման առաձմահատկություններին, հասկանալի է դառնում, որ դասավանդման արդյունավետությունից է կախված մի ողջ սերնդի հետագա պատմական մտածողությունը:

Ուսումնասիրության ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման արդյունավետությունը կախված է առաջադրված այն բոլոր նպատակներից և խնդիրներից, որոնք թեման ուսումնասիրելուց հետո պետք է պարզաբանվեն:
2. Որպեսզի թեման աշակերտների կողմից հասկանալի և պարզ լինի, ապա պետք է թեմայի դասավանդումը իրականցվի նախապես որոշված մեթոդների և հնարների միջոցով, որոնց կիրառումից հետո արդեն սովորողները կարող են ինքնուրույն պարզել «Առաջին համաշխարհային պատերազմ» թեմայի պատճառահետևանքային շղթան:

3. «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեման աչքի է ընկնում իր դժվարությամբ: Թեմայի հետ կապված կան որոշ բարդ և դժվարամատչելի փաստեր, որոնք աշակերտները կարող են հասկանալ միայն ուսուցչի կողմից կազմակերպվող մեթոդների և հնարների շնորհիվ:
4. Ինչպես գիտենք, հիմնական և ավագ դպրոցում աշակերտներին ներկայացվող պահանջները փոփոխվում են: «Առաջին համաշխարհային պատերազմ» թեմայի դասավանդման համար սովորողներին ներկայացվող որակական, քանական պահանջները նույնպես փոփոխվում են, կապված այն կարևոր հանգամանքի հետ, որ ավագ դպրոցում սովորողների պատմական մտածողությունը ավելի զարգացած է լինում:
5. Ուսուցիչը պետք է պարտադիր կերպով «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի համար ունենա դասի համար մշակված տարբերակը և դասի պլանի նմուշ-օրինակ: Պլանը ստեղծագործական որոնումների սկիզբն է, դասի արդյունավետության և ուսուցչի նպատակների իրագործման միջոց: Օգտագործելով դրանք ուսուցիչն իր օրինակով սովորողներին վարժեցնում է աշխատանքի կազմկերպվածության, պլանով և նախօրոք պատրաստված կարճ գրառում-թեզիսներով աշխատանքի:

Այսպիսով շատ կարևոր է անդրադառնալ «Առաջին Համաշխարհային պատերազմ» թեմայի առանձնահատկություններին, որի միջոցով կարող ենք զարգացնել և ամրապնդել աշակերտների գիտելիքները և ապահովել դասի արդյունավետությունը, որը ուսուցչի կարևորագույն նպատակներից մեկն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Համաշխարհայինպատմություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2009:
2. «Համաշխարհային պատմություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր (VI-IX դասարաններ), Երևան, 2012:
3. ՊապոյանՀ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013:

4. Գիրք պատմության ուսուցման, ինչո՞ւ, ինչպե՞ս, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ, Եր., 2020:
5. Համաշխարհային պատմություն առարկայի հիմնական դպրոցի չափորոշիչ (VI-IX դասարաններ):
6. Համաշխարհային պատմություն, Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտակամաթեմատիկական հոսքերի ծրագիր, (10-12-րդ դասարաններ):